

ջուրն հաւք խմելով՝ զլուխնին դէպի երկինք կը բարձրացնեն, որով յերկինս գտնուող այս գերեղմանի մէջ թաղուած մարդու հոգին՝ իւր ծարաւը կը յագեցնէ:

Այս հռչակաւոր վանքի զիրքն հոյակապ շինուածքը որմերու վերայ եղած արձանագրութիւնը, շրջակայ աւերակներն, հետաքրքրական հին արձանագրութիւններն, Բազուանայ վայրի վերայ ծանօթութիւն. Մպատայ գագաթն գտնուած եկեղեցին և Մեծն Մերսիսի աղօթատեղին, վանքի կալուածոց տարածութիւնը և մի անգամ Պարսից և Օսմանցոց պատերազմին վանքիս մէջ անցած դէպքերն, որք շատ հետաքրքրական են և յատուկ առանձին նկարագրութեան են կարօտ:

Այս հռչակաւոր վանքը ունէր ընտիր ձեռագրաց մատենադարան, որ պահուած էր վանքի որմերու մէջէն սանդուխներով դէպի գմբէթ բարձրացած մի դարանի մէջ, այս ձեռագիրներ ամբողջովին 77 ի պատերազմին վանքի մէջ թողուած են և ի կորուստ մատնուած: Մի ամենաընտիր ձեռագիր մաքաղաթեայ Աստուածաշունչ քրդերու ձեռք կանցնի, կը բերեն Ղայաբէկ հայ զիւղն, կը գնեն վայր ու փայտով հարուածներ կտան ձեռագրին, որպէս զի հայեր մեծ գին տան, գերութիւնից ազատեն, կողոպտուած հայեր աստի անտի ցորեան հաւաքելով կտան, կը ստանան Աստուածաշունչն:

Տեսած եմ այս Աստուածաշունչն և չեմ կարողացած յիշատակարանն օրինակել. ցարդ տեսած ձեռագիր Աստուածաշունչներուս մէջ որոյ նմանը չեմ տեսած, ամենաընտիր մագաղաթ և խիստ մանր տառերով և մեծ խնամով զրուած: Միաբանէ մի լսած եմ որ— յիշատակարանին մէջ կայ ի Սասուն երկու բարեպաշտ մարդիկ երկու ընդարձակ խաղողի այգի նուիրած